

Ասոնցմէ զուրս նուիրեց նաեւ շատ մը դորչա ոսկեզրամ, ոսկեղէն զարդեր, արծաթեղէն ամաններ, մետաքսէ եւ ոսկեթել զիպակներ. Լեւոնի տրամազրութեան աակ զբաւ նաեւ վեց ցոկանաւ ու վեց նաւ, իրենց բոլոր կազմածներով, որպէս զի գործածէ զանոնք երբ փափագի երթալ ձեռք բերել իր թագաւորութիւնը. իսկ Ծրանսա երթալու համար ալ իբրեւ ճամբու ծախք վճարեց 15,000 Ֆլորին :

Յովհաննէս Ա. երբ Մադրիդի Քաղաքային Վարչութեան զրկած եւ իր կողմէ ստորագրուած ու կնքուած շնորհաթղթով (privilegio) հաստատեց նոյն քաղաքին Լեւոնի արուած ըլլալը, շատ յուզուեցան քաղաքացիները, իրենց թագաւորին կողմէ « օտարականի մը » եղած այս անսպասելի առատաձեռնութիւնովը՝ քաղաքին առանձնաշնորհումները վտանգուած նկատելով(1) . վասն զի հին ժամանակներէ ի վեր Մադրիդ քաղաքը կը վայելէր մասնաւոր լայն առանձնաշնորհումներ ու ներքին ազատ օրէնքներ, որոնց բարձու մը կրնար զանազան խոտովութիւններու տեղի ալ թերեւս : Արդ, Մադրիդի եւ չրջակայ վայրերու երեւելիները 1383 թ. հոկտեմբերի 2-ին ժողով գումարելով՝ իրենց սիրելի թագաւորին բացարձակ կամքին հնազանդելու եւ այս կերպով անոր աւելի՝ հաճելի ըլլալու համար թէեւ որոշեցին Հայոց թագաւորին հպատակիլ եւ պաշտօնապէս յայտնել իրենց

տեսակ մը (*Apuntes para la historia de D. León Lusignan V; exrey de Armenia y primero de este nombre de Madrid*, ԷՆ. ԵՐ. 5), կրտսն թէ Լեւոն վերը յիշուած երեք քաղաքներու « քաղաւոր » անուանուած է Բայց ուրիշներ՝ չնայելով որ պատճառակաւ ասեմագրութեան մը մէջ (ՏԵ՛Ս ԵՐ. 95) Լեւոնի « արխայական իշխանութիւն » տրուած ըլլալն արձանագրուած է, կը հակառակին այս ենթադրութեան, պնդելով որ Յովհաննէս Ա. Լեւոնի « Մադրիդի քաղաւոր » տիտղոսը չէ տուած, այլ « Տանուսեր » կոչած է. (*Geronimo de Quintana. Historia de la antigüedad, nobleza y grandeza de Madrid*, թղ. 317 թ.) : Լեւոնի հրովարտակին մէջ ալ պիտի տեսնենք, որ Հայաստանի քաղաւորն ինքզինք « Տանուսեր Մադրիդի » կը կոչէ :

(1) José Amador y Juan de Dios, *Historia de la villa y corte de Madrid*, ԷՆ. Ա, ԵՐ. 401: Գրքիս հեղինակները ցաւ կը յայտնեն, որ Յովհաննէս Ա-ի կողմէ տրուած յիշեալ շնորհաթղթը չէ գտնուած դեռ : Քառասուն եւ աւելի տարիներ յետոյ եւ ալ հարկ եղած դիմումներն ըրի եւ փնտնել տուի զայն, բայց ի զուր : — Պէտք է աւելցնել, որ Մադրիդ տակաւին մայրաքաղաք եղած չէր այն ժամանակ, եւ միայն Փիլիպպոս Բ-ի օրով, 1561-ին, մայրաքաղաքի վերածուեցաւ :